ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/27

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ
Մասնակից՝ «Մոբբիս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցում, կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.01.2020թ.-ի թիվ 26/26-1/539-2020 գրությամբ «Մոբբիս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) 16.01.2020թ.-ի թիվ 18.1/1163-2020 գրության հիման վրա, 17.01.2020թ.-ին «Մոբբիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ՆԳ-2020/20 համարի ծածկագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ՍՑ-ՆԳ-2020/20 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/27 համարի ծածկագիրը և 18.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 18.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.02.2020թ.-ին:

2. <u>ՀՀ վարչապետի աշխատակազմի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ վարչապետի աշխատակազմն 16.01.2020թ.-ի թիվ 18.1/1163-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

««Վարչապետի աշխատակազմի կարիքների համար կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա հայտարարվել է «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-20/11» ծածկագրով ԳՀ ընթացակարգ: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-րդ

ենթակետի պահանջներին համապատասխան հրավիրված բանակցությունների արդյունքում «Մոբբիս» ՍՊԸ-ն հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը գնահատող հանձնաժողովը որոշեց «Մոբբիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացվել է թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Մոբբիս» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Մոբբիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը գրությամբ դիմել է «Մոբբիս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.01.2020թ.-ի թիվ 26/26-1/539-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 24.01.2020թ.-ի ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Մոբբիս ՍՊ ընկերության մասնակցել է Վարչապետի աշխատակազմի կարիքների համար կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայությունների ձեռքբերման գնումների գործընթացին և գնումների գործընթացի մասնակցության հայտի լրացման ժամանակ տեղի է ունեցել թյուրըմբռնում, կապված գնառաջարկի ներկայացման հետ՝ Մոբբիս ՍՊ ընկերության կողմից գնառաջարկը ներկայացվել է 1 (մեկ) միավոր արժեքին համապատասխան գումար՝ 6 (վեց) դրամ ներառյալ ԱԱՀ, ընդհանուր բյուջեն նշելու փոխարեն՝ 1 500 000 (մեկ միլլիոն հինգ հարյուր հազար) դրամ ներառյալ ԱԱՀ:

Հարկ եմ համարում նշել, որ գնումների գործընթացում մասնակցություն ունեցած 3 մասնակիցներից 2-ը այդ թվում Մոբբիս ՍՊ ընկերությունը հայտը լրացրել է նույն կերպ, ընդ որում մասնակցություն ունեցած մասնակիցներից ամենացածր գնառաջարկ ներկայացրած Պելեկա ՍՊ ընկերությունը մերժվել էր՝ «գնային առաջարկում փառերով

նշված ընդհանուր գինը չի համապատասխանում Ինքնարժեք+Շահույթ+ԱԱՀ սյունակների հանրագումարին» հիմքով:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԿԱՐՃ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ Հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության հիման վրա, այդ թվում՝

- *«Գնումների մասին» ՀՀ օրենքի,*
- *ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի,*
- *ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի*
- *և այլ իրավական ակտերի*

Վերոնշյալ հիմքով Պելեկա ՍՊ ընկերության հայտի մերժումը հիմնավոր չէ, քանի որ համաձայն Հրավերի 5-րդ գլխի, 2-րդ կետի Ե ենթակետի ՝

«5.2 Մասնակցի հայտը ենթակա չէ մերժման՝

Ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը»:

Այսպիսով, Պելեկա ՍՊ ընկերության գնառաջարկում, թեև ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում թվերով լրացված գումարների հանրագումարը և ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը չեն համապատասխանել, այնուամենայնիվ հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը, ինչը (ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը) Պելեկա ՍՊ ընկերության գնառաջարկում ճիշտ է ներկայացված եղել:

Հիմք ընդունելով վերոնշյալ դիտարկումները, կցանկանայի մատնանշել, որ Մոբբիս ընկերությունը ամենևին նպատակ չի հետապնդում մրցակից ընկերության կամ հանձնաժողովի դեմ, որևէ բողոք ներկայացնել, բայց և այնպես վերոհիշյալ դիտարկումները թույլ են տալիս եզրակացնել, որ մյուս մասնակցի հայտի ընդունման դեպքում սույն գործընթացը կշրջանցեր Մոբբիս ընկերությանը:

Մոբբիս ՍՊ ընկերությունը բազմիցս մասնակցություն է ունեցել ՀՀ պետական, մասնավոր և միջազգային գնումների գործընթացին և նման թյուրիմացություն առաջացել է առաջին անգամ: Այսպիսով, հավատարիմ մնալով պատասխանատու ընկերության գործելաոճին, ընդունում եմ մեր կողմից թույլ տված թյուրըմբռնումը և գիտակցում գումների գործընթացին մասնակցելու ընթացքում նմանատիպ սխալների անթույլատրելիությունը: Այուամենայնիվ խնդրում եմ, հաշվի առնելով սույն փաստաթղթում ներկայացված դիտարկումները, չ'ներառել Մոբբիս ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/27 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ)::

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մոբբիս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը որոշել է կասեցնել նիստը և մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2019թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մոբբիս» ՍՊԸ-ն ներկայանալով գների նվազեցման շուրջ միաժամանակյա

բանակցություններին, հրաժարվել է իր կողմից ներկայացրած գնային առաջարկից և գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «Մոբբիս» ՍՊԸ-ի հայտը:

«Մոբբիս» ՍՊԸ-ի կողմից 27.12.2019թ.-ին ներկայացվել է դիմում «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որով հայտնել է հետևյալը.

««Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Մոբբիս» ՍՊԸ-ն մասնակցել է Վարչապետի աշխատակազմի կարիքների համար կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայությունների ձեռքբերման տենդերին:

Տենդերի մասնակցության հայտի լրացման ժամանակ տեղի է ունեցել թյուրըմբռնում, կապված գնառաջարկի ներկայացման հետ: «Մոբբիս» ՍՊ ընկերության կողմից գնառաջարկը ներկայացվել է 1 (մեկ) միավոր արժեքին համապատասխան գումար՝ 6 (վեց) դրամ, ընդհանուր բյուջեն նշելու փոխարեն՝ 1 500 000 դրամ (մեկ միլիոն հինգ հարյուր հազար):

Այսպիսով խնդրում ենք դիմումի հիման վրա մերժել «Մոբբիս» ՍՊ ընկերության մասնակցությունը կամ ընձեռնել հնարավորություն վերաձևակերպման:»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.01.2020թ.-ի թիվ 26/26-1/539-2020 գրությամբ «Մոբբիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ)::

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մոբբիս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը որոշել է կասեցնել նիստը և մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2019թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մոբբիս» ՍՊԸ-ն ներկայանալով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին, հրաժարվել է իր կողմից ներկայացրած գնային առաջարկից և գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «Մոբբիս» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ վարչապետի աշխատակազմն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 16.01.2020թ.-ի թիվ 18.1/1163-2020 գրությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 27.12.2019թ.-ին՝ հիմք ընդունելով 2019 թվականի դեկտեմբերի 27-ի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը, սակայն Պատվիրատուն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 16.01.2020թ.-ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում

նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.01.2020թ.-ի թիվ 26/26-1/539-2020 գրությամբ «Մոբբիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/27 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ